ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԿԱՄ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անհրաժեշտ է իմանալ, որ.

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ճանաչված կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ (այսուհետ՝ համապատասխան կարգավիճակ) ստացած օտարերկրյա ֆիզիկական անձինք կարող են արտոնությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծել իրենց անձնական օգտագործման ապրանքները, եթե Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններ են ներկայացնում համապատասխան կարգավիճակը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը և նախորդ բնակության երկրում բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը հետևյալ պայմանների միաժամանակյա ապահովման դեպքում.

1) նախորդ բնակության երկրից Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) մաքսային տարածք ապրանքների այդ թվում տրանսպորտային միջոցների ներմուծումն իրականացվում է ոչ ուշ, քան օտարերկրյա ֆիզիկական անձին համապատասխան կարգավիճակ ստանալու փաստը հաստատող փաստաթղթի տրման օրվանից 18 ամսվա ընթացքում.

2) անձնական օգտագործման ապրանքները ձեռք են բերվել օտարերկրյա ֆիզիկական անձին համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի տրման օրվանից առաջ, ընդ որում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցները, ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդները գրանցված են եղել և գտնվել են արտոնությունից օգտվելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի սեփականության ներքո (կամ ձեռք են բերվել վարկային կամ լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո), այդ անձի նախկին բնակության երկրում՝ ***առնվազն վեց ամսվա ընթացքում՝*** համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի տրման օրվանից առաջ: Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների

իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո:

3) համապատասխան կարգավիճակ ստանալու հետ կապված՝ ԵԱՏՄ մաքսային տարածք մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ անձնական օգտագործման ապրանքներ այդ ֆիզիկական անձի կողմից նախկինում չեն ներմուծվել.

4) համապատասխան կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքները չեն գերազանցում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած բնաիրային չափերը:

Ուշադրություն

Արտոնությունը տրամադրվում է միայն օգտագործված ապրանքներին, որոնք չպետք է գերազանցեն ՀՀ կառավարության սահմանած հետևյալ բնաիրային չափերը.

1. կենցաղային և անձնական օգտագործման սարքեր՝ յուրաքանչյուր տեսակից 3 հատ, /օրինակ՝ սառնարան, հեռուստացույց/,
2. օգտագործված կահույք՝ յուրաքանչյուր տեսակից մեկ լրակազմ,/ օրինակ ննջասենյակի կահույք, հյուրասենյակի կահույք/,
3. անձնական գործածության իրեր և օգտագործված տնային այլ գույք՝ առանց քանակային սահմանափակումների /օրինակ՝ հագուստ, սպասք/,
4. անձնական օգտագործման տրանսպորտային միջոց* /օրինակ՝ ավտոմեքենա, մոտոցիկլետ, և դրանց կցորդներ՝ յուրաքանչյուր տեսակից 1 միավորից ոչ ավելի:

*Անձնական օգտագործման տրանսպորտային միջոց համարվող տրանսպորտային միջոցները սահմանված են ԵՏՀ կոլեգիայի 30.06.2017 թվականի թիվ 74 որոշմամբ:

2. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կարևոր է իմանալ, որ

1. Մշտական բնակության փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթը տրամադրում է ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը:

Ընդ որում փաստաթուղթը կարող է տրամադրվել այն դեպքում, եթե

ա) օտարերկրյա անձն փաստաթղթի համար դիմելու օրվան նախորդող 2550 օր ժամանակահատվածում առնվազն 1280 օր բացակայել է Հայաստանից:

բ) անձն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ:

2. ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը մշտական բնակության փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթը նույն անձին տրամադրում է միայն մեկ անգամ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձը, նախկինում ստանալով Հայաստանի Հանրապետության մշտական բնակության տեղափոխման փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթը, ստանալու օրվանից 18 ամսվա ընթացքում չի օգտվել մշտական բնակության ժամանող օտարերկրյա ֆիզիկական անձանց համար նախատեսված մաքսային վճարների արտոնությունից:

3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը ստանալուց հետո անհրաժեշտ է դիմել ՀՀ մաքսային մարմիններին ՀՀ ներմուծված ապրանքները մաքսային վճարների արտոնություններով ձևակերպելու համար:

- Մաքսային վճարների արտոնությունից օգտվելու համար՝ Համապատասխան կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձը մաքսային մարմիններին է ներկայացնում դիմում, որում նշում է տեղեկություններ Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման օգտագործված ապրանքների անվանման, քաշի և քանակի վերաբերյալ՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ, կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ ունենալու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց.

2) օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը.

3) մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանումն օտարերկրյա պետությունում ֆիզիկական անձի բնակության փաստը հավաստող փաստաթուղթը.

4) ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 261-րդ հոդվածում նշված՝ անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերը.

5) անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի ներմուծման դեպքում՝ օտարերկրյա պետության լիազոր մարմնի տրամադրած՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների, ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդների արտոնությունից օգտվել ցանկացող ֆիզիկական անձի անունով գրանցման և սեփականության փաստը հաստատող փաստաթղթերը:

4 . ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Համապատասխան կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքների ժամանակավոր պահպանումը կարող է իրականացվել այդ անձի մշտական կամ ժամանակավոր բնակության (գտնվելու) վայրում:

Օտարերկրյա ֆիզիկական անձը, որը մտադիր է ՀՀ օրենսդրությանը համաձայն տեղափոխվել Հայաստանի Հանրապետություն և ստանալ մշտական բնակության, փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ, մշտական կամ ժամանակավոր բնակության (ժամանման) վայրերում ապրանքները ժամանակավոր պահման հանձնելու համար, մաքսային մարմնին է ներկայացնում ազատ ռճի դիմում, որում նշված է հետևյալ տեղեկատվությունը.

1) Տեղեկություններ իր մասին (ազգանունը, անունը և հայրանունը (առկայության դեպքում)), անձը հաստատող փաստաթղթերի վավերապայմանները, մշտական կամ ժամանակավոր բնակության (ժամանման) հասցեն, որում ենթադրվում է, որ իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանումը):

2) Ապրանքների մասին տեղեկություններ (անվանումը, քանակը, քաշը կիլոգրամներով և (կամ) չափման այլ միավորներով, արժեքը (անդամ պետության արժույթով, Եվրոյով կամ ԱՄՆ դոլարով)):

3) Տեղեկատվություններ ավտո և մոտոտրանսպորտային միջոցի մասին և (կամ) ավտո և մոտո տրանսպորտային միջոցի կցորդի մասին (հաշվառման համարը, կամ տեղեկատվություն հաշվառումից հանելու վերաբերյալ, տեսակը, մակնիշը, թողարկման տարեթիվը, թափքի համարը կամ նույնականացման համարը, շարժիչի ծավալը, շարժիչի հզորությունը (այդպիսի տեղեկատվության առկայության դեպքում), շասսիի համարը (առկայության դեպքում), արժեքը (անդամ պետության արժույթով, Եվրո կամ ԱՄՆ դոլար)):

4)Դիմումի ամսաթիվը, օտարերկրյա ֆիզիկական անձի ստորագրությունը:

Ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքները ժամանակավոր պահպանման են հանձնվում այն ժամկետով, որը հաշվարկվում է այդ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվան հաջորդող օրվանից՝

1) մինչև դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվան հաջորդող օրվանից 2 ամիսը լրանալու օրը, եթե մինչ այդ ժամկետը լրանալը օտարերկրյա ֆիզիկական անձը դիմումը գրանցած մաքսային մարմնին չի ծանուցել այն գործողությունների իրականացման մասին, որոնք ուղղված են այդ անձի՝ համապատասխան կարգավիճակ ստանալը հաստատող փաստաթուղթը ստանալուն.

2) մինչև ֆիզիկական անձի՝ համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը ստանալու օրվան հաջորդող օրվանից 5 աշխատանքային օրը լրանալը.

3) մինչև ֆիզիկական անձի՝ համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի տրամադրումը մերժելու օրվան հաջորդող օրվանից 10 աշխատանքային օրը լրանալը:

Հիմք՝ <<Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին>> 11.04.2017թ-ի պայմանագրի մաս կազմող ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 259-րդ հոդված, 266-րդ հոդված, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 20.12.2017թ-ի թիվ 107 որոշում, Մաքսային միության հանձնաժողովի 18.06.2010թ-ի թիվ 311 որոշում, <<Մաքսային կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 177-րդ հոդված, ՀՀ կառավարության 02.07.2020թ-ի թիվ 1131-Ն և ՀՀ կառավարության 02.07.2020թ-ի թիվ 1133-Ն որոշումներ:

Ուշադրություն՝

Սույն տեղեկատվությունը կրում է ծանուցողական բնույթ:

ՀԱՐԳԵԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԵԹԵ ՁԵՌ ՄՈՏ ԱՌԿԱ ԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐ, ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՀՀ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ, ԿԱՄ ԴՈՒՔ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՔ ԱՊՐԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԲՆՈՒՅԹԻՑ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՔԱՆԱԿՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՈՐԱԿՎԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՒՆԵՔ ԿԱՍԿԱԾՆԵՐ ՁԵՌ ՄՈՏ ԱՌԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՄՈՏԵՆԱԼ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՁԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

2024